

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՄԱՆ

3 հուլիսի 2018թ.

№ 1272-Ա

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» № 272-Ն որոշման պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել նախարարության ներքին աուդիտի բաժնի պետ Արթուր Պետրոսյանին:
2. Նախարարության քարտուղարությանը՝ եռօրյա ժամկետում նախարարության ստորաբաժանումներին, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին շրջաբերականով տեղեկացնել ազդարարման համակարգի օրենքի և նախարարությունում նշանակված պատասխանատու անձի մասին:
3. Նախարարության հեռահաղորդակցության բաժնին՝ եռօրյա ժամկետում պատասխանատու անձի կոնտակտային տվյալները տեղադրել նախարարության պաշտոնական կայքի առաջին էջում:

ՆԱԽԱՐԱՐ

ԶՈՀՐԱԲ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ